

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԿԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի... Առանձին համարները 7 կոպեկով...

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ...

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով...

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ...

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամերիկա գաղթած հայերը.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բագուի Էլիիրիւ-Մէթօղիեան ընկերութիւնը...

ԱՄԵՐԻԿԱ ԳԱՂԹԱՍ ՀԱՅԵՐԸ

Թիւրքաց շայաստանում տիրապետող տընտեսական անտանելի պայմանների և քրդական հրոսակների անսանձ յարձակումների...

Այժմ Ամերիկայի շայոց գաղթականութիւնը կազմում է մի ահապահ թիւ,— աւելի քան 10 հազար հայեր, որոնք բուն են գրել զինուորային Միացեալ-Նահանգներում...

Նակ կը դառնայ իր մէջ պահելու, կերակրելու և երջանկացնելու իր գաւախներին: Ամերիկայի շայ-կոյսիսիան, ինչպէս երեւում է այդտեղից ստացված տեղեկութիւններէ...

Այդ բոլորին նորերս աւելացել է մի նոր միջոց, — այդ շայ-կոյսիսիանի համար շայոց գրադարաններ հիմնելն է, որտեղ հայրենիքից կտրված և մայր-երկրից հազարաւոր վերաբերով հեռացած հայերը կարողանում են կարգաւ հայերէն լրագիրներ, հայերէն զրբեր, և այդպիսով մի կողմից մտաւոր պաշար ստանալով, մի կողմից հնարաւորութիւն են ստանում բարոյապէս միշտ կապված մնալ իրանց հայրենիքի, և հայրենիքում մնացած ազգակիցների հետ:

Եւ Մայր-Նայրենիքի հետ այդ բարոյական կապ պահպանելը և զօրեղացնելը, — մեր խորին համոզմունքով,— պէտք է լինի Ամերիկայի շայ-կոյսիսիայի զինուոր նպատակը և անկեղծ ցանկութիւնը: Դրա պատճառները շատ են: Նախ հազարաւոր ընտանիքներ, թիւրքաց շայաստանում, յետին թշուառութեան և աղքատութեան մէջ, միակ յոյսը դրել են իրանց այն գաւախների վրա, որոնք հեռուոր պանդխտութեան ցուպը ձեռք առան միմային այն նպատակով, որ կարողանան զէթ հեռու աշխարհում փող վաստակել միջոց գտնել իրանց սիրելիների կեանքը ապահովելու, վաշխառուների և հարկահանների ձանկերից ազատվելու համար:

Այդ բաւական է: Այն հազարաւոր

պանդխտները, որոնք գաղթել են Ամերիկա և ուրիշ տեղեր, կազմում են թիւրքաց-Նայաստանի հայ ազգաբնակչութեան ծաղիկը, ամենաթարմ, երիտասարդ մասը: Նրանց հեռանալն է պատճառը զինուորային, որ երկրի հայ ազգաբնակչութեան աճումը կանգ է առնում, և եթէ նրանք իրանց մտքից հանեն հայրենիք վերադառնալը և փորձեն օտար երկրի մէջ մնալ, և այնտեղ էլ անցկացնել իրանց կեանքի մնացած օրերը,— այն ժամանակ թիւրքաց-Նայաստանի մէջ ազգաբնակչութեան աճումը ոչ միայն կանգ կառնի, այլ նոյն իսկ գնալով կը նուազի, կը քանայ...

Իսկ այդ տուր երեւոյթը ոչ միայն ցանկալի չէ, այլ ընդհակառակը ամեն միջոց գործ դնելով պէտք է աշխատել դրա առաջն առնել, քանի որ հայ տարրի զօրեղացնելը փոքր-Վսիլայում ունի կուլտուրական մեծ նշանակութիւն, և քաղաքակրթական մեծ ապագայ:

Ում չէ յայտնի, որ ոչ թէ միայն թիւրքաց շայաստանում, այլ նոյն իսկ ամբողջ փոքր-Վսիլայում միակ տեղացի ազգը, որ յարել է եւրոպական քաղաքակրթութեան և ընդունակ է իւրացնելու և տարածելու ժամանակակից քաղաքակրթութիւնը,— դա հայ ազգն է:

Դա մի այնպիսի մեծ միտքն է պատմութեան ձեռքով զրկված փոքր-Վսիլայի հայ ազգաբնակչութեան վրա, որ այդ միտքն, այդ գրաւիչ քաղաքաբար պէտք է ողբերկի այդ ազգաբնակչութիւնը, ոչ միայն մայր-հայրենիքի մէջ թիւրքաց պետութեան սահմաններում, այլ և նրանց որոնք այդ երկրից գաղթել են դէպի հեռու երկրներ:

Հեռու, միլիոնաւոր ժողովուրդներ ունեցող Ամերիկայում՝ հայ-կոյսիսիան չէ կարող ոչինչ քաղաքակրթական դեր կատարել և նպատակը ժամանակակից կուլտուրայի տարածմանը: Իսկ դրա հալածակի մի առ-ժամանակ օտար երկրի մէջ մնալով, կազմուցում ոչ միայն նիւթական կողմից վերջին օրն է, որից յետոյ այլ ևս միդը չէ ծախվում: Բացի մրգեղէնից աճողին քանակութեամբ ծախվում են և շիրինիսիսը—քաղցրաւնիքը, հաւաններ, նոյնպէս 7 տեսակէ: Կեն մի ամիս առաջ սովորապէս դանդաղ, անհոգ, անտարբեր պարսիկ ժողովուրդը սկսում է եռանդով, կենդանութեան նշաններ ցոյց տալ:

Սրտատրոփ և անհամբեր սպասում են Նովորուզին ամենքը: վեղերը սպասում է, որ այդ օրը նոր, աւելի մեծ աստիճան կը ստանայ. կուսակալը, որ այդ օրը աւելի արդիւնաւէտ նահանգ կը ստանայ կուսակալութեւ, կամ գուցէ ոտին բաղի կը այդ օրը, վերջապէս, կը ստանայ իր ուժերը. ծառան, որ այդ օրը իր աղայից կը ստանայ պարսիկ, նոր հագուստ և խալաթ, կիներ, որ այդ օրը իր մարդուց կը ստանայ նոր գարդեր, հագուստ: Մասնաւոր վաճառականները, որոնք ամբողջ տարի ձեռքերը ծալած նստած են լինում, յոյս ունեն այդ վերջին ամբողջ ամեն բան ձեռք բերել և լու աշխատանք անել: Մի խոցելով փոփոխակի վախ և յոյս, վճատութիւն և իրախոյս, կամ բարձրութիւն կամ անկում, կամ մահ կամ կեանք:

Ոչ պակաս անհամբերութեամբ սպասում են Նովորուզին Եւրոպայի և նրա միմիայնները: Փէքէշներին առատ հունձը Նովորուզին է: Սովորութիւն է դարուց դար աւանդված, որ Նովորուզին մարդիկ պէտք է միմիայն ընծաներ տան. այդ սովորութիւնից առատ կերպով օգտվում են և պետական մարդիկ: ձեռք է, թէ Եւրոպ, թէ նրա նախարարները և թէ կուսակալները բաւական դրամ են ընծայում այդ օրը, բայց իրանք ևս առատ հունձ են անում: Եւ ահա ինչպէս:

այլ և իւրացնելով քաղաքակրթ երկրի շատ սովորութիւնները, գաղափարները և մտքերը, և այդ գաղափարներով ու մտքերով բեռնաւորված հայրենիք վերադառնալու, հայ գաղթական տարրերը նորից ի մի ձուլվելով մայր-երկրի մէջ մնացած ժողովրդի հետ, կարող կը լինեն ծառայել կուլտուրական այն մեծ գործին, որը կրկնում ենք, պատմութիւնը դրել է հայ ժողովրդի վրա:

Բացի ծնողների սերը, բացի մերձաւորների կարօտը, վերջապէս բացի հայրենիքի, և հայրենի օջախի յիշատակները, հայ-կոյսիսիսիան միշտ և ամեն տեղ պէտք է ողևորէ և այն քաղաքակրթական դերը, որը կոչված է կատարելու հայ ազգաբնակչութիւնը փոքր-Վսիլայում, և որը խոստովանում են թէ եւրոպական շատ պետական գործիչներ և թէ նշանաւոր մտածողները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՎՈՒՆԻ «ԿԻՐԻՍ-ՄԷՏՈՒԿԱՆ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Եթէ տարի է ահա, որ գոյութիւն ունի այս ընկերութիւնը: 1887 թ-ին երբ սկիզբն է առնում, գործի է լինում նիւթական միջոցներից իր գործունէութիւնը սկսում է անպակաս կապիտալով, որ առաջին տարիներում 100 ռուբլուց չէ անցնում: Չը նայելով այդպիսի աննպաստ նախադասութիւններ, ընկերութիւնը շատ կարճ միջոցում կարողանում է իր գործունէութիւնը շոշափելի դարձնել, օրքց օր առաւ հասարակութեան համակրութիւնը գրաւել: Այսպիսով անցած եթէ տարիների ընթացքում աճողում է նրան աւելի քան 24.000 ռուբլի ձեռք բերել և գործադրել:

Ինչ է արել ընկերութիւնը այս 7 տարվայ ընթացքում և ինչպէս է գործադրել ձեռք բերած 24.000 ռուբլին:— 1) կազմակերպել է եկեղեցական կանոնաւոր երգչակի խումբ, որը տարեկան 5—6 անգամ հասարակական կոնցերտներ է տալիս: 2) բաց է արել Բագուի շրջանում, պահպանում ու

Պարսկաստանում բոլոր արդիւնաւոր պաշտօնները, նոյն իսկ նահանգների կառավարութիւնը կազմելով են տրվում: Օրինակ, Արաքստականի կամ Ապահանի փոխարքայութիւնը կամ կառավարութիւնը երբ յանձնվում է մէկին, նա պարտաւորվում է զանաւարտին տալ որոշ գումար. այնուհետև այդ նահանգի արքունի բոլոր հասոյթները, հարկերը, տուրքերը իրան են պատկանում: Վնասանի թէ օգուտ, այդ իր գործն է... նա պարտաւոր է վճարել որոշակի տուրքը: Պատահում է, որ նահանգապետը վնաս է անում՝ երաշտութեան, սովի կամ որ և է աղէտի պատճառով և նա, ինչպէս ասում են, ոտին բաղի է բերում, այսինքն պարտական է մնում զանաւարտին և որովհետև բաղի բերելու նետանքը սարսափելի է՝ պաշտօնանկութիւն, գոյքի յարկունիս գրաւում, մինչև անգամ ոսնանարութիւն, ուստի նա, Նովորուզին մի քանի ժամանակ առաջ շտապում է գնալ մայրաքաղաք և ընծաների միջոցով գործը դրստել: Բոլոր կուսակալները, նախարարները, նոյն իսկ զեսպանները պարտաւոր են Նովորուզին ընծաներ մատուցանել Եւրոպ, թագուհու, նախարարապետին, իրանք էլ ըստ կարգին ընծաներ պէտք է ստանան իրանց ստորադրեալ պաշտօնանկներից: Եւ ուղում է իր տեղը մնալ, պաշտօնից չը զրկվել: պէտք է ընծայ տայ և յաղթութիւնը շատ տուրքինն է:

Այդ է պատճառը, որ կըր Նովորուզը մտնում է, ամեն տեղ տրվում է յուզումներ, անհանգստութիւն, շարժում և գործունէութիւն:

Այժմ պատմենք թէ ինչպէս է տօնվում Նովորուզը:

Ինչպէս ասվեց, դեռ օրերով առաջ պարսիկները մասնաւոր Գերբները (գրադաշտանները) մեծ պատ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐՍԱԿԱԿԱՆ ՄԵՐՏՈՆ

ԷՅԴԸ ՆՕՎՈՒՉ

Երէկ, մարտի 9-ին, թէ մեր երկրի, թէ Պարսկաստանի և թէ օրա հետ կրօնական, ցեղական և պատմական կապերով շարկապված բոլոր երկիրների, ինչպէս, օրինակ, Բուխարայի, Աֆղանիստանի և Հնդկաստանի շրջաօճակութեան և զբաղաւորական աղանդին պատկանող ժողովուրդները տօնեցին մեծ հանդէսով՝ Նովորուզ-էյրը կամ ամանորի տօնը: Որովհետև այդ տօնը աւելի շքեղ և փառաւոր է կատարվում Պարսկաստանում, ուստի աւելորդ չենք համարում Նովորուզի մասին մի գաղափար տալ մեր ընթերցողներին: Նովորուզ նշանակում է նոր օր, ամանոր: Նա տօնվում է միշտ մարտի 9-ին, գարնանամուտին, և նրա նշանաբանն է նոր կեանք, նոր յոյս, ինչպէս գարնան հետ ծաղկում է նոր կեանքը: Նովորուզի տօնը հաստատողը, հաշկուտը Ֆերդուսու Շահնամէի վկայութեան համեմատ, եղել է Չէմշիլը արքան, նա որ թագաւորում էր Քրիստոսից 550 տարի առաջ և որին պէտք է ընդունել կիրոսի տեղը: Հին գրադաշտական և պարսկական ազգային սովորութիւններից այդ միակն է, որ ազատվել է մասնատակաւորութեան ֆանատիկութիւնից և չը նայելով այդ կրօնի հետեւողների բոլոր ջանքերին՝ դուրս վանել այդ տօնը ժողովրդական կեանքից, չը նայելով որ արաբացիները, նուաճելով Պարսկաստանը, մտցրին իրանց տարեգրու-

թիւնը, հիճրին, բայց և այնպէս Նովորուզի տօնը յարատեւ և այսօր ևս նոյն շուքով է կատարվում, ինչպէս 2000 տարի առաջ: Նովորուզը մի և նոյն ժամանակ և նոր տարին է նրա տօնակարգութիւնը տեւում է 40 օր:

Թէև, ինչպէս ասեցինք, արքաները մտցրին Պարսկաստանի մէջ իրանց տարեգրութիւնը և սովորական նամակագրութեան մէջ հիճրու թուականն է գործածվում, որի սկիզբն է մուհարրէմ-միսը, բայց պետական և պաշտօնական տարեգրութիւնը կամ քաղաքական տարին Նովորուզիցն է սկսվում: Բոլոր պաշտօնական հաստատութիւնները և գանձարանը իրանց հայրենիքը Նովորուզին Նովորուզ են պահում և փակում: Բոլոր նոր պաշտօնները, աստիճանները, միմիայնների, կուսակալների նշանակումը և պաշտօնանկութիւնը լինում է Նովորուզին: Նոյն իսկ վաճառականները իրանց բոլոր գործողութիւնները Նովորուզի վրա են կատարում և եթէ միւր պէտք է մասնականայ, այդ անանկութիւնը յայտարարում է Նովորուզին մի քանի շաբաթ մնացած:

Արդէն Նովորուզից մի ամիս առաջ, ամեն մարդ սկսում է պատրաստութիւններ տեսնել. քաղաքները լցվում են զիւղայիններով, որոնք գալիս են հարկաւոր բաները գնելու.— նոր հագուստ, նոր կոշիկ, նոր գլխարկ—ամեն բան Նովորուզին նոր պէտք է լինի— և մրգեղէն: Տաս օր առաջ բոլոր բազմաբնակ գորգավորում են գոյնզոյն, խայտաճամուկ զարդերով—պատկերներով, թանգազին շաբերով, զար ձոթերով, արծաթեայ, պղնձէ ալմաններով, յախճատակներով և սկսվում է մրգափաճառութիւնը: Շախում են 7 տեսակ մրգեղէն, որ կոչվում է Էրզրի լովուն. մասնաւոր նշանաւոր է այդ կողմից վերջին չորեքշաբթի օրը, այդ

կառավարում է 9 ծխական-եկեղեցական դպրոցներ: 3) մասնաւոր նուիրատուութիւններով բայց է արել եկեղեցուն կից գրաւաճառանոց և գրադարան: 4) ժողովրդական դաստիարակութիւնների համար բերել է տուել դանդաղ պատկերներ մագալան լապտերով: 5) կազմել է դասագրքերի և այլ դասական պիտանքների պահեստ՝ ծխական-եկեղեցական դպրոցներին մատակարարելու համար: 6) միջոցներ է ձեռք առել արդէն բայց անկող ժողովրդական ձրի ընթերցարան, և վերջապէս 7) բայց է արել Բաղուրի ծխական-եկեղեցական դպրոցին կից կազմարան՝ աշակերտներին արհեստ սովորեցնելու համար, — ահա գլխաւորապէս այն կէտերը, որոնցով ընկերութիւնը մարմնացրել է իր գործունէութիւնը:

Ինչ վիճակի մէջ է ներկայումս ընկերութիւնը և ինչ է անում: Ընկերութեան իսկական և տարեկան անդամների թիւը ներկայումս 78-ի է հասնում. տարեկան մուտքը 1,200 ռուբլուց չէ անցնում, բայց այդ չնչին գումարով տեղի ունեցած գործունէութեան արդիւնքը աւելի զգալի, աւելի շոյախիլ է, քան մեր 60—70 հազար դուա դրամաւոր լինելով «Մարտիրոսական» ընկերութեանը:

Ինչպէս ամենայն տարի, այնպէս էլ անցած 1893 թւին ընկերութիւնը ունեցաւ 5 կոնցէրտ և 8 հատ ժողովրդական դաստիարակութիւն մոզական լապտերներով: Երգեցիկ խումբը, որ կոնցէրտներ է տալիս, բաղկացած է 30—40 հոգուց, որոնցից 10—15 հոգի երեխաներ են, մեծ մասամբ չքաւորների որդիք, կան և բոլորովին որբեր: Ընկերութիւնը մտադիր է կառուցանել այդ որբ և չքաւոր երգիչներին համար ընդհանուր ապաստարան՝ առողջապահական բարձր վիճակի մէջ ապրեցնելու դիտարութեամբ: Ժողովրդական դաստիարակութիւններ տեղի են ունենում ծխական-եկեղեցական դպրոցում, որ շինված է ի վերջոսակ 1888 թւին հոկտեմբերի 17-ի թագաւոր կայսրի արձաման: Կարողացած դաստիարակութիւնները ընդհանուր կրօնական-պատմական բնաւորութիւն են կրում, բայց յաճախ կարողացում են նաև գիտական բնաւորութեամբ:

Ունեւորները լինում են երկու սեռից էլ, աւելի միջին դասակարգից, քան թէ ստորին, իրանց համար աշխատող արհեստագործներ, լուսացարաններ, ծառայողներ ու դասական գործակատարներ և այլն, որ 150—200-ի չափ ներկայ են լինում ամեն մի դաստիարակութեան: Ամբողջ դասակարգը բացակայում են. վարձկան արհեստագործները, բանւոր դասակարգը, որ ահագին բազմութիւն են կազմում այստեղ, չեն հետաքրքրում: Նրանք ամբողջ օրվայ դառն աշխատանքից յետոյ իրանց աւելի հանգիստ և վշտամու են դրում գա-

րաստութիւն են տեսնում հանդիպելու նորտարին, ինչպէս հրէաները պատրաստվում են պատէքի համար: Նովորուրի նախընթաց օրը, այն է մարտի 8-ին, պալատական մոսկէ ջիւմ բաշին կամ գլխաւոր աստղադէտը որոշում է, թէ այդ օրը որ ժամին և որ րոպէին հին տարին պէտք է յանձնէ նոր տարւում իր իշխանութիւնը, մի գործողութիւն, որ կոչվում է թաճիլ: Թաճիլը կարող է լինել և առաւօտեան ժամը 6-ին, 8-ին, երեկոտեան, նայելով աստղերի բարեզուշակութեան: Թաճիլը տեղի է ունենում պաշտօնապէս, հանդիսով: Դաճը կամ կուսակալը ամեն տեղի իշխանութիւն կատարում է իրանց պաշտօնական համազգեստները հագած՝ նստում են գահի վրա, հողեղարակման ընթացքում է այդ օրը և նորձաւորում է, որոշելով րոպէին թողանալից արձակում են և աստղադէտը բարձրաձայն հռչակում է, որ հին տարին յանձնեց նոր-տարուն իշխանութեան գաւազանը: Գրանից յետոյ Դաճի կամ կուսակալի առաջ դնում են երկու մեծ ասիւսներ կամ մէջմահիներ, լցված մէկը արծաթէ, միւսը ոսկէ մանր շահիներով, որոնք յատկապէս Նովորուրի համար կտրվում են: Իւրաքանչիւր հանդիսական մտնում է, ծունկ է չոքում և ստանում Դաճից մի բուռն այդ դրամից: Նայելով հասակին, աստիճանին, պաշտօնին այդ բուռը վտիտ կամ չաղ է լինում:

Թաճիլի հանդէսը վերջանում է շիրիններ և մրգեղէն բաժանելով: Երկրորդ օրը, մարտի 9-ին, բուն Նովորուրի օրը, տեղի է ունենում այն մեծ հանդէսը, որ դարբերից ի վեր անընդհատ կրկնվում է, Կիրոսի օրերից մինչև այժմ: Այդ օրը պարսից Դահնշաճը սալամի հանդէս է կատարում, տարվայ մէջ այդ

ընդհանրում. այստեղ ուսում, այստեղ խումբ, օրվայ աշխատանքի արդիւնքը այստեղ էլ դնում ու դուրս են գալիս այն ժամանակ միայն, երբ եզոթի՝ պիտի գնան, երբ այլ ևս կոպէկ չէ մնում: Ընկերութեան գրաւաճառանոցը կարող է նաև ձրիաբար տեղիս ընկերական դպրոցի ուսուցիչները, երբեմնապէս նաև ուսուցիչները: Ունեւորների մի մասը նստած է լինում, միւս մասը՝ կանգնած: Մինչև այժմ նստողները վճարում էին 5—10 կոպ. իսկ կանգնածները ձրի, հիմա մուտքը անխափ ձրի է ամենքի համար թէ նստողների և թէ կանգնողների:

Ընկերութեան հովանաւորութեան տակ գանձվող դպրոցներն են՝ Բագուրի, Շիրախլի, Կենդարանի, Սախանի, Կերեմուրի, Միխայլովի, Ալթի-ազալի, Զիւզուսովի և Նիկոլայեվսկուսի Այդ դպրոցները կառավարում է առանձին ուսումնարանական յանձնարարությունը, որ կազմված է ընկերութեան անդամներից: Բացի վերոյիշեալ դպրոցներից՝ մտադիր են շուտով բաց անել և Շամարում, Գուրայում, Զաւատում և մի երկրորդը Բագուսում: Այս վերջինը բայց անկող համար արդէն 3000 ռ. նուէր է ստացված Նիկեթորոսի վաճառական Ս. Ա. Լորոնիկովից: Աչքի առաջ անեն և որիչ նուէրներ: Եղած դպրոցներից մի քանիսը օրիորդաց են, մնացածները տղայաց: Գաղտնիքն ունեն իրանց առանձին հողաբարձուները, տղայացը՝ տղամարդկանցից, օրիորդացը՝ կանանցից: Գեո անցեալ 1893 թ. սեպտեմբերի 1-ին այդ դպրոցների բոլոր աշակերտները թիւն էր 317, որոնցից 192 տղայ, 125 աղջիկ, նրանց մեծ մասը՝ 306 հոգի ուսուներ են, մնացածները գերմանացիք, պոլսակներ, պարսիկներ ու հրէաներ: Ինն դպրոցից 7-ը ունեն իրանց սեփական շինութիւններ, իսկ 2-ը դեռեղված են վարձված շինութիւններում: Գասաւանդութիւնը կատարում է գլխաւորապէս հողեղարակների ձեռքով: Կան և վարձովի ուսուցիչներ և ուսուցչուհիներ:

Վերջիլի—Մեքոթիան ընկերութիւնը Բագուրից դուրս ունի երեք ձիւղ՝ Բոժի-Պրոմիսում, Միխայլով գիւղում և Շամարում Ալթի-ազալ գիւղում: Բոժի Պրոմիսի՝ ձիւղը այնտեղի դպրոցին կից բայց է արել արհեստանոց՝ ուսկան գործել սովորեցնելու: Միւս ձիւղերը նոյնպէս ունեն ժողովրդական գրադարաններ, կարդում են դաստիարակութիւններ և այլն:

Այդ փաստերը հաղորդելուց յետոյ, կարող ենք ակնարկել, ահա մի ընկերութիւն, ահա մարդկանց մի խումբ, որ չնչին գումարով, բայց մեծ եռանդով արդիւնատու է դարձնում իր գործունէութիւնը: Դա թող լինի մի փայլուն ապացոյց մեր այն ընկերութիւնների համար, որոնք հասարակական ամեն մի գործ, բարենպաստակ ամեն մի ձեռնարք օրը միայն նա նստում է արջայական դահի վրա, դնում է գլխին արջայական թագը, որի պատկն է հռչակաւոր «նուրիէ»՝ աղանանդը և բռնում է ձեռքին արջայական գայիտոնը: Այդ օրը Պարսկաստանի ինքնակալը իր ամբողջ փայլով և չքեղանքով պէտք է ներկայանալ իր ժողովրդին: Գրա համար է, որ միայն այդ օրը գանձարանից հանում են բոլոր թանկագին գործերը, քարեղէնները և սալամի ժամանակ շարվում են գահի առաջ, ոսկէ տիպիկների մէջ: Սալամի հանդէսը կատարվում է պալատի այն մեծ դահլիճում, որտեղ դեռեղված է արջայական գահը, հռչակաւոր մարմարեայ գահը, որը Նադիր Դաճը բերել է Հնդկաստանից և կարծիքով է լինել Մեծն-Ալեքսանդրի գահը:

Առաւօտից սկսած բոլոր դորագիւղերը խումբ խումբ գալիս, շարվում են մեծ բակի կենտրոնում գանձվող աւազանի շուրջը, որի շարքում են ներքայ օրը ահագին բարձրութեամբ բղիկեցնում են ջուրը: Աւազանի գլխին՝ մեծ կոնքերի մէջ լցրած են շերեթ և վարդաբուր: Զօքի գլխին, գահի լի պատուհանների առաջ, շարվում են բոլոր միջնորդները, պաշտօնականներ և մուսուսֆիները, ինչպէս և դաշար ցեղի անդամները, վերջինները և մուսուսֆիները (արձանագրող դով են հաղնված, — ոսկեհուռ շալի երկայն բաճակնակ և գլխին մեծ փաթիլոց: Զին տարազով է հագնված մեծ արարողակաւոր: Մուսուսֆիներից վերև կանգնած է, գահին դէմ յանդիման, պալատական բանաստեղծը, որը պէտք է կարող այդ օրվայ խորթին (ուղերձը): Բուն դահլիճի մէջ, գահի շուրջը կանգնած են միայն արջայակունները:

կուրթին պատեցնել են ուզում միմիայն փողի շուրջը...

Ն. Գ. ՆԱՄՄԱԿ ՊԵՏԵՐՈՎՈՒԿԻՑ

Փետրվարի 13-ին Երկրորդ Եսոթ խոցկին համայնքի մասին մի ղեկուցում կարդաց. նա առաջարկում է «Արատ-անտեսական ընկերութեանը» մի քանի հետազոտողներ ուղարկել՝ տեղի ու տեղը ուսումնասիրելու համայնքի իրական պակասութիւնները և առաւելութիւնները, պարզելու այն բոլոր անբարեյաջող հանդամանքները, որոնք համայնական հողաբերութիւնը դարձնում են վնասակար գիւղացու բարեկենցաղի և երկրագործութեան համար. որոշելու, թէ որքան այդ հանգամանքները կազմած են համայնքի կաղնակերպութեան հետ, և որքան դրանք կողմնակի խոչնդոններ են հանդիսանում. ի վերջոյ համեմատելու նրան հողի բաժնետիրական ձևի հետ (Подворное хозяйство) և վճուել որ ձևը՝ համայնական, թէ մասնաւոր բաժնետիրական, աւելի է համապատասխանում երկրագործական կուլտուրայի առաջադիմութեան: Հետազոտութիւնը անաչտո անելու համար, նա առաջարկում է, որ ուղարկվելիք հետազոտողների երկուսը լինեն համայնքի կողմնակիցներ, իսկ միւս երկուսը՝ հակառակողներ: Խնդրի վերջնական վճիռը թողվից 6—7 հոգուց ընտրված մասնագործի, որ բանակցութիւն սկսելով Մոսկվայի «Գիւղատնտեսական ընկերութեան» հետ, պէտք է որոշի թէ ինչ ձևով յարմար է բարեկալ այդ խնդրի ուսումնասիրութիւնը: Միաժամանակ Մոսկվայում էլ պրոֆէսոր Չուպրով առաջարկել է ուսումնասիրել համայնքը, օգտվելով դեմատվոներով տուած թւերով:

ՆԱՄՄԱԿ ԱԼԷԿՍԱՆԴՐՈՎԻՑ

Փետրվարի 20-ին «Кавказ» լրագրի № 17-ի մէջ Ալեքսանդրոպոլի գաւառի նախկին կառավարիչ պ. Մերիքիով մի նամակով կամենում է հերքել այստեղ երևացած տիֆ հիւանդութեան մասին «Մշակի» մեր հաղորդած տեղեկութիւնները, որ արտասուպէ էր «Кавказ»-ը: Մեր գրածի մասին պ. Մերիքիով ասում է հետևեալը. «Այդ թղթակցութիւնը սխալ է սկզբից մինչև վերջը, և երբեք է ուղղված է մի բժշկի դէմ, որը ցանկութիւն ունի քաղաքային բժշկի բացվելիք տեղը բռնելու: Թէ որքան մեր թղթակցութիւնը «սխալ է սկզբից մինչև վերջը», այդ ցոյց կը տան մեր առաջ

կէտերին մի ժամ մնացած՝ դորքը սկսում է նուազելով պատել բակի շուրջը. շաթիլները արծաթէ գաւազանները ձեռքին, կարմիր զգեստ հագած, դահլիճները ճիւղոտները ձեռքին, պարստի ներքին մասի դռնից մինչև դահլիճը կանգնած են: Այդ միջոցին բոլոր օտար պետութիւնների դեսպանները մտնում են ներս, պալատը, ներկայանալու Դաճին և ստանալու մանր շահիներ: Այդ տեսում է մի քաւոր ժամ, որից յետոյ պալատական մանկուկները պալատի ներսից բերում շարքում են քարեղէնները և բեզալանները գահի առաջ, պատուհանի վրա, ահա բերին և մարդարտանիւր բարձը, որի վրա պիտի նստի Դաճը, և դրին գահի մէջը:

Խփում է ժամը 12-ը, որտեղ է թնդանութիւնի ձայնը և ձիւղ այդ րոպէին Դաճը պալատի ներսից դուրս գալով՝ բարձրանում է գահի վրա, ջիւղան (թագը) գլխին, թուրը կապած և օտքերը ծալած նստում է: Նրա ամբողջ հագուստը ակապակում է. չորս կողմը ակնեղէն և մարգարտեղէն. այդ օրը պէտք է ակնեղէն ունենալ միշտ թագի առաջ՝ երջանակութիւն ձեռք բերելու համար: Բազում է թէ էլ Դաճը գահի վրա, պալատական մանկուկիկ ներկայացնում է ակնանակու դայանը. երբ Դաճը ձեռքն է առնում դայանը, տիրում է խորին բուրբխ և բանաստեղծը, կանգնելով մէջտեղ, բարձրաձայն ասում է ուղերձը, որը սովորաբար լինում է օտանաւորի ձևով: Դա մաղթում է Դահնշաճին յաւիտենական երջանակութիւն, անպարտութիւն, յաղթութիւն և աշխարհի նուաճումը մաղթում է նոր կենսը, նոր յոյս: Ի պատասխանի Դաճը մի քանի խօսք է ասում ժողովրդի հասցէին, շնորհաւորում է նոր-տարին: Ալեյանից յետոյ մատուցանում են սուրճ, այդ

բերած թւերը, իսկ ինչ վերաբերում է բժշկի դէմ ուղղված լինելուն՝ կասենք, որ մենք բժշկի չենք և ցանկութիւն էլ չունենք քաղաքային բժշկի փառքով պակասած տեսնել ոչ մեզ և ոչ ուրիշ մէկին: Բժշկի մասին մենք յայտնել ենք «Մշակի» մէջ այն կարծիքը, ինչ որ տիրապետում է Ալեքսանդրոպոլի հասկացող շրջաններում Այժմ ապացուցէք, որ նա ընդունակ է իր արհեստի մէջ, որ նա հիանալի է իր պաշտօնում և իր բժշկի մեծ համակրութիւն է վայելում. համոզեցէք մեզ այդ բանում, եթէ կարող էք:

Պ. Մերիքիովի նամակի երեք նշանաւոր կէտերին մենք կը պատասխանենք.

Նախ՝ տիֆ հիւանդութիւնը Ալեքսանդրոպոլում ստացել էր Էպիտիմիական բնաւորութիւն, և ներքինի մեղք է ոչ թէ մի հոգի, ինչպէս պ. Մերիքիովն է հաստատում, այլ 62 հոգի, ինչպէս վերկայում են քաղաքի հողերը կառավարութեանը չարաբերական մատենաները: Եթէ այդքան մեղք են, ապա որքան հիւանդացած կը լինեն: Կարծում ենք, որ 35,000 բնակիչ ունեցող քաղաքը համար այդ հանգամանքը հիմք է տալիս հաստատելու այդ հիւանդութեան Էպիտիմիական լինելը: Երբ պատահում է 6—7 հոգուց բաղկացած ընտանիք, որոնք բոլորն էլ բռնվում են տիֆով (մենք հարկաւոր դէպքում կարող ենք ցոյց տալ) և այդ ընտանիքից մեռնում են 3 հոգի, ասացէք, ինչպիսիք ենք, սա էպիտիմիա է, թէ ոչ: Այդ մէկ:

Երկրորդ. ազատ պրակտիկա ունեցող բժշկից յայտնի էր այստեղ քաղաքային բժշկի անուսնով. իսկ եթէ նա պաշտօնապէս հաստատված չէ եղել և 35,000 բնակիչ ունեցող մի քաղաք՝ իր հակասանիտարական պայմաններով մինչև 1894 թւի յունվարի 1-ը քաղաքային բժշկի չէ ունեցել, այդ աւելի վատ վաղուց պէտք է ունեցած լինէինք:

Երրորդ. մեր թղթակցութեան այս կէտը պարունակում էր չէ հակակցել, ապա թէ ոչ՝ մենք հաւատացած ենք, որ այդ աստիճան անհիշող երակացութեան չէր հանին: Մենք գրել էինք. — «Բժշկին ժողովրդորդը չի դիմում, այլ հրաւիրում է համարեա միտ գիւրտական բժշկիներին: Բայց այստեղ էլ վարձատրութեան խնդրի կայ, և հացի կարօտ աղբատր անկարող է դիմել դրանց»: Աստեղից պ. Մերիքիով դուրս է բերում հետեւեալ հրաշալի երակացութիւնը. «Սխալ է նոյնպէս հարդարած, թէ ղիւրտական բժշկիներ կողմից ձրի օգնութիւն չէ արվում, և նրանցից ասմեն մէկը ոչ միայն կարող է ցոյց տալ ձրի օգնութեան դէպք, այլ հաւանական է նրանք կը կարողանան մի շարք դէպքեր բերել, երբ հիւանդի ընտանիքը կարող էր վարձարել բժշկի աշխատանքը, բայց չէ վարձարել»: Այդ երգա-

նչան է, որ ստամբ վերջացել է: Հնչում է երաժշտութիւնը, թնդում են թնգանութիւն և Դաճը նոյն հանդիպով վերադառնում է պալատ: Այս ժամ յետոյ նա գալիս է պալատի մեծ հրապարակ, որտեղ խոնամ է ժողովուրդը՝ բմբիշները, փահլէվանները, փիղերը այդ օրը պէտք է ցոյց տան իրանց հոճարը և ստանան Դաճից մանր դրամները: Այդ օրը ժողովուրդը արձակ համարձակ ձիճաղում, գոռում, գոռում է խրոխտ Դաճի առաջ, որը իր նստած անեակի պատուհանից թափում է արծաթէ և ոսկէ մանր դրամներ:

Այսուհետև սկսվում են այցելութիւնները. Նովորուրի տունին ծանօթ, անծանօթ մարդիկ գնում են միմեանց տուն շնորհաւորելու: Ամեն տուն բայց է, անհակում դարձված են շիրիններ, ծաղիկներ և սինիներով մէջ անպատճառ 7 տեսակ այսպիսի ուտելիք, որոնց անուան սկիզբը Ս. տառով է սկսվում, օրինակ սաօր, սխտոր, սոխ, սեխ և այլն: Այդ սովորութիւնը դարձել է և անշուշտ ունի իր նշանաբանը, բայց ոչ որ չը կարողացաւ բացատրել ինձ բուն միտքը: Իւրաքանչիւր այցելու, մանում է թէ ոչ, նրան սրտով են վարդաշրով, մատուցանում են զէլյան, սուրճ, թէյ և շիրինի. եթէ ասնտեղը աստիճանով, պաշտօնով, ընկերական վիճակով աւելի բարձր է, նա տալիս է այցելուին և փոքրիկ դրամներ:

Արթուր 40 օր օտնվում է Նովորուրը, որից յետոյ կենսքը դարձեալ մտնում է իր հին շուղի մէջ, տիրում է թուրքութիւնը, անտարբերութիւնը մինչև նոր Նովորուրը:

Հ. Առաքելյան

կացութիւնը սխալ է սկզբից մինչև վերջը դի- նուարական բժիշկներին մեր թղթակցութեան մէջ մենք չենք մտադրել. և մեր ինչ գործն է, թէ շատերը կարող էին վարձատրել նրանց և չեն ա- րել:

Այժմ աւելորդ չեն համարում մեր պատաս- խանին կցել մի քանի վիճակագրական ճիշդ թիւեր, հողեր կառավարութեան սուսմաներից բաղ- ված, որոնք ամենալաւ ապացոյց են, թէ ինչ դը- րութեան է մասնավոր եղել քաղաքը առողջապա- հական կողմից՝ ամբողջ 1893 թվի ընթացքում:

1893 թվի յունվարի 1-ից մինչև 1894 թվի յունվարի 1-ը քաղաքում առաջ են եկել հետե- լեակ վարակիչ հիւանդութիւնները.— ծաղիկ, տիֆ, դիֆթերիա և սկարլաթինա: Այդ թվի մէջ ծաղ- կից մեռել են 465 հոգի, զննական մասով 380 հոգի, դիֆթերիայից և սկարլաթինայից միասին՝ 246 հոգի, տիֆից 62 հոգի,— ընդամենը 1.153 հոգի: Հասկանալի է, թէ որ դասակարգից աւելի մեռած կը լինին:

Մեր 1893 թվի ընթացքում օրինաւոր ամուսնու- թիւները ծնվել են 909 հոգի, որոնցից 446 աղջիկ, 463-ը աղայ: Ապօրինի ամուսնութիւնից ծնվել են 5 հոգի— երկուսն աղջիկ, երեքը աղայ: Ուրեմն բոլոր ծնվածները թիւն է 914, այ- մինքն մեռածները թիւից 239-ով պակաս: Չը մտանաւոր ասել, որ այդ տեղեկութիւնները վե- րաբերում են քաղաքի միմիայն հայ ազգանա- կութեան:

Ահա ձեզ փաստեր, որոնց դէմ ամեն մի գրու- թիւն կորցնում է իր ոյժն ու նշանակութիւնը: Մենք յոյս ունենք, որ այս թիւերից էլ կօգտվի «ԿԱՅՔԱՅԷ»-ի խմբագրութիւնը:

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՅ

Մարտի 3-ին

Փետրվարի 27-ին տեղի ունեցաւ Բարեգործա- կան ընկերութեան ընդհանուր ժողով, որտեղ բացի պարահանդէսից ստացուած ամբողջ եկա- մուտը, որոնցից ցնղ ձեռք բերելու համար նախա- հաշուով որոշված 600 բուրջին էլ յատկացնել նա- հանգին սովեաներին, որովհետև տաքնապալից լուրեր են ստացվում: Ընդհանուր ժողովը ընտ- րեց պ. Ս. Տէր-Մարտիրոսեանցին, որ վերջինս իր ծախսով վարչութեան հետ չըլի գաւառները և օգնութիւն հասցնի սովեաներին՝ ցորեն բա- ժանելով: Վարչութեան եռանդը զովասանքի արժանի է: Մինչև այժմ սովեաներին յատկաց- բած է 1900 բուրջ: Չենք կարող այս առիթով մասնաւոր չանել երբեմն վարչութեան անդամ ե- ղած մի քանի անձանց վրա, որոնք յանդուրժութիւն ունեն հրապարակ դուրս գալ և յարձակվել ընկերու- թեան վրա, և ժողով հրաբիրողին աւել. «մենք ժողով չենք դաչ և փող չենք վճարի այդպիսի ընկերութեա- նը»: Մենք էլ մեր կողմից կանանք այդ պարտքներին. «պարտքներ, ապա ինչ էիք ուզում. ուզում էիք, որ միշտ անդամ մնայիք և ձեր դժգոհութեան տեսարանները ուղարկէիք դիւղերը որպէս ժողո- վրդական գրքեր, և փողը վերցնէիք դրամարկ- ղից»...

Թէ մեզանում հոգալիստները որքան երես- են առել, այդ երևում է այն բանից, որ փոխա- նակ հացի գինը մինչև 36—38 կ. իջնելու, հա- զիւ իջնելուն նախ 44 կ. և յետոյ 42 կ. սրանով էլ չը բաւականացած՝ հոգեթիւնները նորից սկսե- ցին հացը աւելի վատ թխել և հացի տեղ խմոր վաճառել:

Վերջերս ժողովրդի խօսակցութեան առար- կան է այն 5—6 տարեկան հայ աղջիկը, որի անգութ հայրը նրան վաճառել է 50 բուրջով մի թուրքի: Թուրքը գնելով աղջկան՝ մոլայի ձեռքով հաւատարմութիւն է անում: Գործը այժմ քննվում է:

Թէ երևանում առևտուրը որ աստիճանի ըն- կած է, այդ երևում է այն բանից, որ վաճառա- կանները մի քանիսը արձակեցին իրանց գործա- կատարներին նոյն իսկ առանց վարձ տալու, և կարծէք այդ խնդրերից որից են նախապատրաս- տութիւնը ճնշեց սկզբից դր տեսնված: Օրինակ՝ մէկը գործակատարի հետ պայմանաւորվելու պայ- մանի մէջ ստորագրել է տալիս որդուն և այն է ասում. «չինա զանդատվիր, տեսնեմ որդուցս ինչ կը ստանաս»: Իսկ մի ուրիշը բոլորովին պայման էլ չէ կապել և ոչինչ էլ չէ տալիս: Այդպիսի ազնիւ երեկոթները շատ գէշներ են տեղի ունե- ցել:

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՈՒԹԵԱՆ

Երևան, մարտի 3-ին

Վովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան երևանի ճիւղի վարչութիւնը որդական պարտք է համարում անկեղծ հնորակալութիւն յայտնել Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրիկին, որը իր միջոցներէց 200 բուրջի նուիրեց վարչութեանս ի նպաստ նահանգի սովեաների:

Վարչութիւնս նոյնպէս պարտք է համարում հնորակալութիւն յայտնել յորդակների տիկիններ՝ Ա. Հասան-Ջալալեանցին, Ն. Եղիազարեանցին, Ն. Տիրամանեանցին, Բ. Անդրասեանցին, Ե. Կամ- սարականին, Ե. Ամիրխանեանցին, Կ. Եղիազա- րեանցին, և պարտքներ՝ Ա. Ափրիկեանցին, Վ. Եղիազարեանցին, Ա. Սարգիսեանցին, Կ. Կամարականին, Թ. Քալանթարեանցին, և Լ. Եղիազարեանցին, որոնք ոչ մի ջանք չը խնայե- ցին արդիւնաւէտ և չքեղ դարձնելու պարահան- դէսը, որը տեղի ունեցաւ փետրվարի 23-ին, քա- ղաքային կլուրի դահլիճում, նախաձեռնութեամբ հայոց Բարեգործական ընկերութեան ի նպաստ նահանգի սովեաների:

Պարահանդէսից մուտք է եղել ընդամենը 1269 բուրջի, որից դուրս գալով 140 բուրջի ծախսը, դուրս արդիւնք մնաց 1129 բուրջի:

Նախագահ վարչութեան՝ բժ. Յ. Յովհաննիսեան ի տեղի քարտուղարի՝ անդամ Գ. Ահարոնեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՈՒՅՐ

Տեղական լրագիրներում տպագրված այն լու- րի մասին, թէ Ֆինանսների մինիստրութիւ- նը մերժել է 150 հազար բուրջու փոխա- տութիւն տալ կարսի նահանգի կարտեաներին, դեռ ևս պաշտօնագէտ կամ պաշտօնական աղ- բիւրներից մեզ ոչինչ յայտնի չէ: Շատ ցանկալի է, ի հարկէ, որ լրագիրները մէջ երևցանք այդ լուրը սխալ լինի:

Փետրվարի վերջերին, ժընձվում, բաղմաթիւ հասարակութեան ներկայութեամբ, կարգացվել է մի հրապարակական դասախօսութիւն՝ թիւրքիայի մասին: Գասախօսողն էր պ. Հօֆման, որ նոր էր վերադարձել թիւրքիայում կատարած իր ճանա- պարտորութիւնից:

Կ. Պօլսի և արտասահմանի լրագիրները հա- ղորում են, որ որոշված է Էջմիածնի ձեռնարանի գիւղացի աշակերտներին գործնական կերպով հողագործութեան և այլ գործեր տալ: Հարկաւոր ենք համարում յայտնել արտասահմանի լրագիր- ներին, որ այդ լուրը ճիշդ չէ և այդպիսի որո- շումն չէ եղել:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ գարնան սկզբին գնալու է Պետերբուրգ Վեհափառ Վաթնիկները, որին, ի միջի այլոց, կողակցել և խորէն ծայրագոյն վարդապետ Ստեփանէ, որը կա- տարելու է և թարգմանի պաշտօն:

Երեքշաբթի, ամսիս 8-ին, կայացաւ Կայսերա- կան Վովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ներթափանցիկ, որ նուիրված էր մի շատ կարևոր խնդրին, այն է անը երրորդութեան և նրա դէմ մաքաւուելու միջոցներին: Ընկերութիւնը կազմել էր մի յատուկ յանձնաժողով, որ ղեղավոր էր խնդրի մշակութեամբ և պատրաստել մանրամասն դիւրացում, որը և ներկայացվեց ժողովին: Յանձ- նաժողովի անդամ պ. Յ. Խատիսեանը կարողաց- մի մշակված բացատրութիւն, որով պարզում էր գիւղական հողագործութեան ամենախոշոր արդիւնաբերութեան, այն է հոյահատիկների մը- շակութեան տնտեսական մեծ նշանակութիւնը և հրաբիրում ընկերութեան անդամների ամենա- խորին ուշադրութիւնը: Ապա կարողացվեց յանձ- նաժողովի ղեկուցումը, որը առաջարկում է ըն- կերութեան. 1) ժողովը մանրամասն տեղեկու- թիւններ հողագործութեան մասին, 2) կազմա- կերպել գույքանների փորձնական հանդէս և 3) խնդրել մինիստրութիւնից, որ նա օգնի ընկերու- թեան նպատակներին, բանալով մի փորձնա- կան աղբիւրի Ալեքսանդրօպօլի դատարան և նշանակելով այդ աղբիւրի կառավարութեան և տնտեսական հետազոտութիւնների համար երկու մասնագետ: Ժողովը միաձայն ընդունեց բոլոր ա- ռաջարկութիւնները:

Ժընձվեց մեզ գրում են, փետրվարի 26-ից, հե- տեալը. «Այս օրերս այստեղ հաստատվեց ու ու- սաց հիւպատոսութիւն»:

Առաջիկայ երկուշաբթի, մարտի 14-ին, թիֆլի- սի արքունական թատրոնում, տիկին Տէրեան-Կոր- զանսօվայի մասնակցութեամբ, տեղի պէտք է ու- նենայ մի կօնցէրտ՝ յօգուտ Կովկասի հայոց Բա- րեգործական ընկերութեան: Ի նկատի ունենալով, որ Բարեգործական ընկերութեան խորհուրդը ու- ռոշել է այդ կօնցէրտի արդիւնքը ամբողջովին յատկացնել Երևանի և Կարսի նահանգների կարօ- տեաների օգտին, անտարակոյս ենք, որ հասա- րակութիւնը մեծ համակրութեամբ կը վերաբերվի այդ կօնցէրտին:

«Новое Обозрение»-ի ասելով, թիֆլիսում ստաց- ված է ներքին գործերի մինիստրութիւնից տե- ղեկութիւն, թէ Ֆինանսների մինիստրը մերժել է Կարսի նահանգապետի միջնորդութիւնը, որով նա- նկարում էր անբերրութիւնից նշանված գիւղա- ցիներին տալու 152 հազար բուրջ՝ այն պատ- ճառով, որ սերմնացանութեան համար օգնութիւ- նը այժմ ուշ է և որ նշանվածները կարող են իրանց տնտեսութիւնը պահպանել մասնաւոր, գիւ- ղից դուրս պարագուծներով:

Կանանց Բարեգործական յանուն ս. Նունէի ըն- կերութեան խորհուրդը խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. «Թիֆլիսի ուսումնարանին ուղղած խնդրագիրները օրիորդներին ընկերու- թեան հաշուով գիշերօթիկ ընդունելու մասին պէտք է մատուցվին յանուն խորհրդի ոչ ուշ, քան ապրիլի 15-ը, իսկ իրանց հաշուով ցանկա- ցող գիշերօթիկների խնդիրները ոչ ուշ, քան յու- նիսի 1-ը: Խնդրի հետ պէտք է ներկայացնեն. ա) ծննդեան մետրիքական վկայականը. բ) բժշկից ստուծ ծաղիկ պատուաստման և քաշառողջու- թեան վկայականը և գ) վկայական ծաղման և չքաւորութեան, եթէ օրիորդը ընդունվելու է ըն- կերութեան հաշուով: Վերոյիշեալ ժամանակա- միջոցից ուշ ներկայացրած, նմանապէս առանց միջնալ վկայականների մատուցած խնդիրները մը- նում են առանց հետեւեալի:

Յ օ ղ ու տ Գ ր ի ղ որ Ա թ թ ու Ն ու ա թ ձ ա ն ի և գ ռ ու ա ժ ջ ն ե ի ի տ պ ա գ ռ ու թ ե ա ն ս տ ա- ցանք. 1) Բարուրից, անյայտ ոմն, 1 բուրջ. 2) Արմաւիրից, Նուրից Տէր-Աւետիսեանից՝ 5 բ. Յա- րութիւն Ալաջանից՝ 1 բ. և Մանուէլ Տէր- Մկրտչեանից՝ 5 բուրջ. 3) Բաթումից, օր. Ս. Բարխուդարեանի միջոցով, 25 բուրջի, հանգանա- կած հետեւեալ անձնիքներից. տ. Աննա Յովհան- նիսեանց՝ 3 բ., Բ. Վառսեանց՝ 1 բ., Մ. Համ- բարձուսեանց՝ 1 բ., Ա. Չաքարեանց՝ 1 բ., Ե. Շահ-Մէլիքեանց՝ 1 բ., Ս. Գուշեանց՝ 1 բ., Տ. Աննա Յովհաննիսեանց՝ 1 բ., Տ. Խաչատրեանց՝ 1 բ., Տ. Գալֆանեանց՝ 1 բ., օր. Ա. Մէլուրսեա- թեանց՝ 1 բ.: Տ. Մ. Մարտիկեանց՝ 1 բ., Տ. Ս. Օղանեզովա՝ 1 բ., Մ. Կուրեանց՝ 1 բ., Օ. Պա- րոնրէկեանց՝ 1 բ., Տ. Մ. Տէր-Պետրոսեանց՝ 1 բ., Տ. Օ. Չաղարեանց՝ 1 բ., Մ. Միհրանեանց՝ 1 բ., Տ. Ն. Միհրանեանց՝ 1 բ., Մ. Միհրանեանց՝ 3 բ., օր. Ս. Բարխուդարեանց՝ 1 բ., Տ. Մ. Սուգա- նահան 1 բուրջի: Ուրեմն նախկին 2480 բուրջի 16 կօպէկի հետ այժմ ունենք 2517 բուրջի 16 կօպէկի:

Պետերբուրգի աշխարհագրական ընկերութեանը, «Новостям»-ի ասելով, պ. Մարտիով առաջարկութիւն արեց՝ հետազոտել Գեօկչայ լիճը, որ ինքն դիտաւո- րութիւն ունի այս ամառը հետազոտութիւններ կա- տարել: Պ. Մարտիով (ոչինչ նպաստ չը խնդրելով ըն- կերութիւնից) արդէն առաջարկեց մտադրված հետա- ղոտութիւնների պիտղորտը: Աշխարհագրական ըն- կերութիւնը ընդունեց այդ առաջարկութիւնը այն պատճառով, որ այդ հետազոտելը լծի մասին մին- չև այժմ եղած տեղեկութիւնները թերի և կըցկը- աւոր են:

Երկուշաբթի, ամսիս 7-ին, արքունական թատ- րոնում կայացաւ տիկին Տէրեան-Կորզանսօվայի հանդերար: Հասարակութիւնն ընդունեց նրան մեծ համակրութեամբ: Երգչուհին յոր անգամ էլ ա- պացուցեց թէ ինչ սաստիճան նա հմուտ է իր ար- լեստի մէջ: Երգերի մշակութեան, երկնքերի ու- սումնասիրութեան մէջ երգչուհին հասել է մեծ կատարելագործութեան: Dans le printemps de

mes années-ն երգեց հիւանակ վարպետութեամբ, մի քանի փոփոխութիւններ մտցնելով սովորական յայտնի եղանակի մէջ: Գեղեցիկ էին Ազրան և Պաստորալը: Հրաշալի էր և «Жизнь, и Любовь, и Луна» երգի առաջին մասը, իսկ երկրորդ մասը անցաւ փոքր ինչ խառն: Երգչուհու ձայնը թէև բարձր չէ և երբեմնապէս չեղում է, բայց բազմ- է, մեղօղիկ և վերին աստիճանի մշակված: Հա- սարակութիւնը վարձաբեց երգչուհուն ծափահա- րութիւններով և բազմակի փառնջերով:

ԷՋՄԻՍՄՆԻՅ մեզ գրում են մարտի 5-ից. «Այսօր Արիտապէս եպիսկոպոս Սեդրակեան, Վեհափառի հրամանով, վարդապետական կոչում է տալու Շոդակաթի վանքում հետեւեալ արեղա- ներին.— Բագրատ Թաւադրեանին, Թաղեոս Արեւ- ծեանին, Ռշտունուն և Արսէն Ղլրտեանին»:

ՍՍԱԻՐՈՊՈԼԻՅ մեզ գրում են. «Փետրվարի 2-ին կայացաւ հայոց եկեղեցու երէցփոխի և ծխա- կան դպրոցների հոգաբարձու ընտրութիւն: Ընտ- րութիւնը վերջացաւ շատ աջօղ, և մեծ ուրա- խութիւն պատճառեց հասարակութեան: Վերընտր- վեց նախկին երէցփոխ Մ. Ա. Նազարեանը, որ երեք տարվայ ընթացքում գրաւել էր հայ հասա- րակութեան համակրութիւնը և մեծ յարգանք էր վայելում իսկ նախկին հոգաբարձու Ա. Բ. Բա- րեանի հրաժարվելու պատճառով նրա տեղը ընտրվեց Գ. Ս. Թովթանյանը, որը յայտնի է հասարակութեան մէջ իր եռանդուն գործունէու- թեամբ»:

ՍՍԱԻՐՈՊՈԼԻՅ մեզ գրում են. «Չը նայած որ հայ հասարակութիւնը առատաձեռն նուէրներով միշտ ապահովեցնում է տեղիս հայոց երկեսու դպրոցի տարեկան ծախսը, այնուամենայնիւ դպրոցի վարչ- ութիւնը թոյլ է տալիս իրան դպրոցի դահ- լիճը տալ մասնաւոր մարդկանց՝ հրաւիրել սարքե- լու և քէֆ անելու: Որքան էլ այդ մասնաւոր մարդիկ օգտակար եղած լինին դպրոցին, այնու- ամենայնիւ աններելի է վարչութեան այդ վար- մուսը, որ մի քանի կօպէկի համար դպրոցի բարձր նշանակութիւնը կտրտում է նոյն իսկ ա- շակերտների և աշակերտուհիների առաջ, երբ սրանք առաւօտեան ուսումնարան գալով տես- նում են դահլիճում հարած մարդիկ, իսկ նախա- սենեակի պատերի տակ և յատակի վրա դիմու- դատարկ շիշեր»:

ԱՍԱԻՐԱԿԱՐՅԻՅ մեզ գրում են. «Էվարդեանց տանի օրը մեր երկեսու ուսումնարանների աշա- կերտների համար մանկական ներկայացում կար, որից յետոյ ցոյց տրվեցին կենդանի պատկերներ և կախարակական լապտերով աշխարհագրական տեսարաններ: Յաջորդ օրը սիրողները, տ. Աղա- բալեանի, օր. Գուրբեանի, Տօնկանեանի, Վար- դանեանի և Քանանեանի մասնակցութեամբ, խա- ղացին «Քանդած օջախ» և «Լըրթ-Կըրթ»: Վերջի- նիս մէջ դերակատարներից ոմանք չափազանց- նում էին իրանց դերերը, իսկ «Քանդած օջախ» շատ լաւ անցաւ: Մի րօպէ մարդ կարող էր մը- ուանալ, թէ սա զաւառական ներկայացում չէ և իրազայողներ սիրողներ չեն, այնքան զաւ ընա- կան և բնական էր: Ներկայացումից դուրս ար- դիւնք մնաց 122 ր, որով, համաձայն սիրողների նախորդ վճառի, պէտք է հանրագիտական բաւարան բերվի Առաջալաքի ընթերցարանի համար: Գժքաղաքար, սիրողներից ոմանց և ըն- թեքարանի վարչութեան անդամների մէջ պա- տուի վէճ ծագեց այն առիթով, թէ ով պէտք է բե- րել տայ բաւարանը. սիրողները, թէ վարչութիւ- նը: Խնդիրն, ի հարկէ, շատ չնչին է և դրանից պատուի խնդրի չը պէտք է չինել: Ինչու չը յար- գել սիրողների եռանդը և նրանց աշխատութիւնը, քանի որ այդ մտքի թէ նախաձեռնութիւնը և թէ իրագործումը նրանց է պատկանում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՎ. ԹԻՒՐԿՅ ՀԱՅԱՍՏԱՆՈՍ

Կ. Պօլսի լրագիրներին գրում են. «Կարնոյ մէջ կազմեալ այն յանձնաժողովը, որ պաշտօն ունէր նպատակ կարօտ անձանց մէջ ցուցակը պատրաս- տել, իր աշխատութիւններն աւարտած է: Ընդա- մենը 7000-է աւելի անձնիք արձանագրուած են այդ ցուցակին մէջ: Խոտրել ժողովը և նոյն յանձ- նաժողովը այժմ խորհրդակցութիւններ կը կատա-

